ՕԾՎԵՑԻՆ ՎԱՆԱՁՈՐԻ Ս. ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑԻ ԱՌԱՋՆՈՐԴԱՆԻՍՏ ԵԿԵՂԵՑՈՒ ԳՄԲԵԹԻ ԽԱՉՆ ՈՒ ԶԱՆԳԸ

Հոկտեմբերի 10-ին Գուգարաց թեմում առանձնահատուկ խանդավառություն էր տիրում: Վանաձորի Ս. Գրիգոր Նարեկացի նորակառույց եկեղեցու գմբեթը պսակվեց օծյալ խաչով: Եկեղեցու կառուցումն սկսվել էր շուրջ երեք տարի առաջ՝ ամերիկաբնակ տեր և տիկին Սարգիս և Հռութ Բեդնյանների ազնիվ բարերարությամբ:

Խաչի օծումը կատարեց Գուգարաց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանը: «Խաչն օծվելով՝ բոլորիս համար դարձավ երկրպագելի սրբություն, որ տրվել է մեզ Երկնավոր Տիրոջից՝ մեր Տեր Հիսուս Քրիստոսից, խաչի վրա Իր արյան հեղմամբ: Խաչն է պարծանքն ու մխիթարությունը քրիստոնյայի, գործի սկիզբն ու ավարտը, մեր անդնդախոր ցավերի դարմանն ու Երկնքի Արքայության առաջնորդողը»,- նշեց առաջնորդ Սրբազանն իր խոսքում:

.Սրբազան Հայրը Ս. Մյուռոնով օծեց նաև եկեղեցու զանգը:

Արարողության ավարտին թեմի հոգևոր դասը և ներկա հավատացյալ ժողովուրդը մոտեցան և համբուրեցին օծված սուրբ խաչը՝ քաջառողջություն ու արևշատություն մաղթելով եկեղեցանվեր բարերարի ընտանիքին:

ԿԱՏԱՐՎԵՑ ԳՈՒԳԱՐԱՑ ԹԵՄԻ ԻՋԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ Ս. ԱՄԵՆԱՓՐԿԻՉ ԵԿԵՂԵՑՈՒ ՀԻՄՆԱՐԿԵՔԸ

Հոկտեմբերի 13-ին Գուգարաց թեմի Տավուշի մարզում, նախագահությամբ թեմի առաջնորդ Տ. Սեպուհ եպս. Չուլջյանի և մասնակցությամբ Տավուշի մարզի փոխառաջնորդ Տ. Սասուն ծ. վրդ. Զմրուխտյանի ու հոգևոր դասի, կատարվեց Իջևան քաղաքի Ս. Ամենափրկիչ եկեղեցու հիմնարկեքը:

Եկեղեցին կառուցվում է տիար Անդրանիկ Ղազարյանի բարերարությամբ:

Արարողությանն իրենց մասնակցությունն էին բերել Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը, Իջևանի քաղաքապետ Վարուժան Ներսիսյանը, մարզային և քաղաքային իշխանությունների ներկայացուցիչներ և բազմաթիվ հավատացյալներ:

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ